

«ՀԱՅՐԵՆԻՔ» մատենաշար, թիվ 23

ԱՐՄԱՆ ԱՄՐԻԿՅԱՆ

ՍՊԻՏԱԿ ԱՐԾԻՎԸ

Հրատարակիչ՝ «ՀԱՅՐԵՆԻՔ» ակումբ

Երեւան – 2010

**Տպագրվում է
Հայաստանի Հանրապետական կուսակցության
աջակցությամբ**

Պատմագիտության դոկտոր, ազգային անվտանգության գնդապետ Արմենակ Մանուկյանի (գրական անունով՝ Արման Ամրիկյան) «Սպիտակ Արծիվը» պատմափաստագրական վիպակը նվիրված է հայ ազգի երախտավոր *Գարեգին Նժդեհին*:

Այն առաջին անգամ հրատարակվել է 2002թ. Երևանում՝ Ազգայնական ակումբի կողմից:

«Ողջուն, բովանդակ Ձանգեզուրի հայության արթուն հսկիչ ու պահապան, մեր լեռնոտ երկրի ազատությունը մարմնացնող Ջորավար Սպարապետ Նժդեհին:

Դու, որ քեզ շրջապատող բարձրաբերձ ժայռերին հատուկ հպարտությանը և վեհությանը միշտ բարձր պահեցիր ազատության եւ ճշմարտության վեհ դրոշակը եւ այդ կարմիր ու պայծառ դրոշակի սյուների տակ փշրեցիր օտարամուտ թշնամի ոհմակներին...»

«Ազատ Սյունիք», 20 մարտի 1921թ.

Մեղմ քամին ամպեր էր բերում սարի լանջին տարածված գյուղի վրա, ապա դանդաղ մղում դեպի հպարտորեն վեր խոյացած գագաթը:

1886 թվականի հունվարի 1-ի Նոր տարվա օրն էր:

Եղիշե քահանան տուն էր շտապում: Նրան հենց նոր հայտնել էին, որ կնոջ մոտ սկսվել են երկունքի ցավերը:

Ահա երևաց համեստ խրճիթը, որի դռանը կանգնած էին մի քանի համագյուղացիներ: Քահանան շտապ քայլերով մոտեցավ նրանց և չէր հասցրել բարևել, երբ երկնքից հանկարծ լսվեց արծվային զիւ, մարտական կռնչի ձայնը: Բոլորն ականա բարձրացրին գլուխները: Օդում հանդարտ լող տվող ամպերից մեկի ետևից թևերը լայն տարածած հայտնվեց սպիտակին տվող հրաշք թռչուն: Շրջապատի ձյունի պես ճերմակ թևերը մի քանի անգամ վեհորեն թափահարելով՝ վեհաշուք արծիվը դանդաղ իջավ Եղիշե քահանայի խրճիթի երդիկին: Թռչունների ճերմակափետուր արքան հպարտ հայացքն այս ու այն կողմ տարավ, ապա գլուխը բարձրացրեց դեպի երկինք: Մարտական կռիւնչը տատանեց ձմեռային սառը օդը: Խրճիթից լսվեց նորածնի ճիչը: Բացվեց դուռը և ժպտացող տատները բարձր ձայնեց.

- Աստված մանչ պարգևեց, Տեր Եղիշ:

- Փա՛ռքդ շատ, Տեր Աստված,- մրմնջացին քահանայի շուրթերը:

Ասես, այդ լուրին սպասող սպիտակաձյունե արծիվը լայն բացեց թևերը, ողջունի մարտական կռիւնչն արձակեց, ապա հեքիաթից իջած

երագի նման վեր խոյացավ ու անհետացավ երկնքում հանդարտ սահող ամպի մեջ:

- Օրինվի՛ ծնունդդ, Գարեգի՛ն, հազար օրհնվի,- նայելով երկնքին՝ խաչակքնվեց քահանան:

Այդ տարին Նախիջևանի երկրամասի Կզնութ գյուղի բնակիչներն անվանեցին «Սպիտակ արծվի հայտնության տարի»:

1886 թվականի առաջին օրն էր:

* * *

Պատերազմ: Ավեր ու արցունք: Վերջապես ավարտվելու է նաև համաշխարհային այս հերթական խելագարությունը:

1944թ. օգոստոսն էր: Խորհրդային զորքերը Բուլղարիայի սահմանների մոտ էին:

Սոֆիայի իր համեստ կացարանում լուռ նստած էր Գարեգին Նժդեհը և տենդագին մտածում էր: Շուտով ռուսները կմտնեն մայրաքաղաք: Դեռ կարող է հեռանալ, բայց ոչ, որոշել է մնալ: Ճակատագրի հեգնանքով՝ ռուսական մարտական դպրոցում գիտելիքներ ձեռք բերած, ապա ռուսների հետ կողք-կողքի թուրքերի դեմ մարտնչած Նժդեհը, 1920-1921թթ. Ջանգեզուրում իր ռազմական ունակություններն ուղղեց նրանց երկուսի դեմ և հաղթող դուրս եկավ: Իսկ հիմա՝ երկրորդ աշխարհամարտի ծանրագույն օրերին՝ հայտնվեց գերմանացիների կողքին...

Սպարապետին ծանր խոհերից արթնացրեց դռան թակոցը:

- Մտե՛ք, դուռը բաց է,- կանչեց նա և հայացքն ուղղեց դեպի ձայնը:

Ներս մտավ իր մտերիմ գաղափարական զինակիցը՝ դոկտոր Հայկ Ասատրյանը, բարևեց, ապա ծանրորեն ընկավ սեղանի մոտ գտնվող աթոռին:

- Մեզ հավանաբար մի երկու օր է մնացել գործելու համար,- ասաց նա և տխուր նայեց սպարապետին:

- Սիրելի՛ս,- գորովանքով ընկերոջը դիմեց սպարապետը,- չէ՞ որ մենք արդեն քննարկել ենք այդ հարցը: Ես այլևս երկընտրանք չունեմ: Պատմական իրողությունը երբեմն շատ է դաժան և կարող է կոտրել տարիներով դավանած մոտեցումները: Ազգի շահը պահանջում է, որ ես մնամ և լինեմ ռուսների հետ: Ցավոք, ուշացած և դժվարությամբ եկավ այն համոզումը, որ միայն Ռուսաստանը, կարմիր թե սպիտակ, բայց Ռուսաստանը կարող է երաշխավորել մեր ազգի գոյատևումը և

զարգացումը: Այս չարաբաստիկ պատերազմը մեկ անգամ ևս փաստեց այդ իրողությունը:

- Այո՛,- համաձայնվեց Յայկը,- Ստալինգրադի տակ ջարդվեցին ոչ միայն գերմանական բանակը, այլև թուրքական նկրտումները: Նրանց զորքերը պատրաստ էին հեղեղելու Յայաստանը: Նժդեհ, հարազատս, լիովին համամիտ են քեզ հետ, սակայն ներքին վախը կրծում է հոգիս: Արդյո՞ք կհասկանան մեզ, արդյո՞ք կհավատան մեր անկեղծությանը:

- Յայկ, ես ասել և կրկնում եմ, դուք բոլորդ ազատ եք ձեր որոշման մեջ: Դեռևս կա Արևմուտք գնալու հնարավորությունը: Ես այլևս չեմ ուզում դեգերել աշխարհով մեկ, երբ գիտեմ, թե որտեղ կարող եմ իրապես օգտակար լինել ազգիս: Թուրքիայի դեմ միակ պայքարող ուժը Ռուսաստանն է, և ես պետք է այնտեղ լինեմ: Եթե չհավատան, ապա դա կհամարեն որպես անխուսափելի ճակատագիր և կկրեն ճակատիս գիրը:

* * *

Այսպես, որոշումը կայացրել եմ և ետ չեմ կանգնի: Իհարկե, դժվար է լինելու: Կհասկանա՞ն, պետք է, որ հասկանան: Չե՞ որ հեռանալը խնդիր չէ: Ես նույնիսկ հիմա կարող եմ թողնել-հեռանալ: Ամերիկացիները զրկաբաց կընդունեն ինձ՝ երդվյալ հակաբոլշևիկիս: Ես դեռ ուժ ու կարողություն ունեմ գործելու, սակայն որոշումս վերջնական է: Ռուսի դեմ՝ ո՛չ մի դեպքում, հակառակը. հարկավոր է օգնել նրանց, որ իմ ազգը ապրի... Գուցե մի քիչ քնեմ, ուղեղս հանգստանա: Քնե՞լ: Ո՛չ, չեմ կարող: Ես իմ ազգի համար եմ ապրել: Սխալնե՞ր: Ո՛չ, սխալներ չունեմ: Կան վրիպումներ, որոնք ժամանակին ուղղել եմ: Այժմ եկել է վերջին, ամենամեծ վրիպումս ուղղելու ժամանակը: Արդյո՞ք նորից վրիպում եմ, սխա՞լ է ... Ո՛չ, ո՛չ...

Անգամ Դրոն էր ճիշտ այդ հարցում: Գերմանացիները չէին խնայի նաև հայերին: Արդեն իսկ կապում էին հրեաների հետ: Փա՛ռք աստծո, գտնվեցին բարեկամներ Բուլղարիայում: Կարողացանք մեր ազգի վրա կախված այդ մահացու հարվածը կասեցնել, չեզոքացնել:

Տղաս՝ Վրեժս, ապահով է կնոջս հետ: Եփիմեն անշուշտ կկարողանա ոտքի կանգնեցնել իմ 8-ամյա զավակին...

Նժդեհը վեր կացավ մահճակալից: Մոտեցավ փոքրիկ գրասեղանին: Ակամա վերցրեց թուղթն ու գրիչը և մեծ տառերով գրեց «Ինքնակենսագրություն»: Մի պահ գրիչը ցած դրեց:

Այո, չէր խանգարի մի անգամ ևս հայացք նետել անցած ճանապարհին: Գրիչը կրկին շարժվեց: Նախադասությունները հայերենով, գեղեցիկ և համաչափ շարվում էին մեկը մյուսի ետևից:

«1. Հայոց հեղափոխական շարժմանը միացել են 17 տարեկան հասակից՝ իբրև գիմնագիտ: Հետագայում լքել են համալսարանը և գործել ցարիզմի և սուլթանականության դեմ: 1906-ին անցել են Բուլղարիա, և Մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի և Լեոպոլդ Գուրինի միջնորդությամբ ընդունվել Սոֆիայի Դմիտրի Նիկոլովի անվան սպայից դպրոցը: Առաջին կարգով ավարտելով դպրոցը, վերադարձել են Կովկաս՝ Մուրադի հայրուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար: Այնուհետև գործել են Պարսկաստանում: 1909-ին վերադարձել են Կովկաս և ծերբակալվել: Բանտերում՝ Ջուլֆայից մինչև Պետերբուրգ՝ մնացել են ավելի քան 3 տարի: 163 դաշնակցականների ծանոթ դատավարությունից հետո՝ Սիբիր չընկնելու համար, անցել են Բուլղարիա:

2. 1912-ին, հայ կամավորներից կազմակերպել են մի վաշտ և Անդրանիկի հետ մասնակցել բալկանյան պատերազմին՝ հանուն Մակեդոնիայի և Թրակիայի ազատագրության: Պատերազմի վերջին շրջանում, իբրև հեղափոխականներ՝ հրաժարվել ենք մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին կռիվներին և գորացրել հայկական վաշտը: Ես վիրավորվել եմ այդ պատերազմում:

Հայոց Դրոշակը և շատ հայ կրծքեր զարդարվել են քաջության խաչերով:

3. Անցյալ համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ ներման արժանանալով ցարական կառավարության կողմից, վերադարձել են Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիվների առաջին շրջանում վարել են հայկական կամավորական 2-րդ գումարտակի փոխ-հրամանատարությունը, վերջին շրջանում ղեկավարել հայ-եզիդական մի առանձին զորամաս:

4. 1917-ին, սակավաթիվ ուժերով օգնության են փութացել պաշարված Կողբին և փրկել այդ շրջանի հայությանը: Այդ միևնույն օրերին անցել են Աբբաս Գյուլ, կապվել եզիդների հետ, և հետո առնելով վերջինների առաջնորդ Յուսուֆ Բեգին՝ վերադարձել են Թիֆլիս և նրան կապի մեջ դրել Հայոց Ազգային հորհրդի հետ:

5. Հայաստանի անկախության նախօրյակին վարել են Ալաջայի կռիվները, որոնցով կարելիություն ընձեռել էր գրում-Սարիղամիշ-Ղարսից նահանջող հայկական զորամասերին՝ անկորուստ անցնելու

Ալեքսանդրապոլ, և Արփաչայը կտրել անցել են միայն այն ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինվորի հետ իմ մարդկանց հաջողվել է փոխադրել Անհից պրոֆ. Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունները:

6. 1918-ի մայիսի վերջերին վարել են Ղարաքիլիսայի ճակատամարտը: Վիրավորվել են: Ներկայացվել ամենաբարձր քաջության շքանշանի:

Պետք է խոստովանել, որ առանց Ղարաքիլիսայի ճակատամարտի ոչ թե օրվա էս. Հայաստանը, այլ և երկրամասի վրա այսօր ապրող հայություն չէինք ունենա: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատյան հայությանը և հիմք դրեց Հայկական Պետությանը...»:

Դադարեցրեց գրելը: Առանց խոհերից կտրվելու՝ բարձրացրեց գլուխը:

1918թ. մայիսն էր, վճռվում էր հայոց ճակատագիրը: Թուրքիայի զորքերի դեմ թե՛ծ կռիվներ էին գնում Ալեքսանդրապոլում: Նժդեհը ջոկատով նահանջել էր Ղարաքիլիսա: Շուրջբոլորը խուճապ էր: Բազմահազար փախստականներ խառնվել էին տեղացիներին: Հուսահատությունը պատել էր բոլորին: Գեղադեմ և առնական հրամանատարը կարգադրեց իր մարտիկներին՝ շարժվել դեպի եկեղեցի, որի շուրջը հավաքվել էին հուսալքված հայրենակիցները: Սպիտակ ձիուն նստած Նժդեհը իր մի քանի մարտիկների հետ մտավ եկեղեցու բակը: Մինչ կսկսեր իր խոսքը, նրա շուրջ խմբված ժողովուրդը լսեց թռչունի հզոր մարտականչը, և քար լռության մեջ բոլորը հայացքներն ուղղեցին դեպի երկինք: Թները լայն բացած մի հսկա սպիտակ արծիվ էր պտտվում եկեղեցու վրա: Մարտական ճիչը ցնցեց քարացած ամբոխին: Դրան հետևեց սպարապետի ռազմաշունչ կոչը.

«Իմ սիրելի՛ ժողովուրդ: Պահն օրհասական է: Միացե՛ք ինձ, և մենք ետ կշարտենք անարգ թշնամուն...

Դե՛պի ճակատ, այնտե՛ղ է մեր փրկությունը»:

Վատ զինված, սակայն Նժդեհի առաջնորդությամբ ոգևորված հայ մարտիկներն անհավասար թվացող մարտում երեք օր հրաշքներ էին գործում: Վիրավորված Նժդեհը մի վայրկյան չլքեց մարտադաշտը, և երրորդ օրվա վերջին, երբ արդեն սկսել էր մթնել, լսվեցին այլ մարտերի ժամանակներից Նժդեհին ծանոթ «բեյազ քարթալ», «բեյազ

քարթալ»¹ բացականչությունները: Թուրքերը թիկունք դարձրեցին և սկսեցին խուճապահար փախչել: Հաղթանակն ապահովված էր:

Նորից սպարապետը շփեց ճակատը և գրիչը կրկին ձեռքն առավ:

«7. Հայաստանի անկախության օրով, 1919-ի աշնանը փրկել են Ղափալուի և Վեդիի միջև պաշարված Հայկ. 2-րդ գունդը:

8. 1919-ի երկրորդ կեսին անցել են Սյունիք՝ Էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված, սովի և սուրի մատնված Գողթանին օգնություն հասցնելու համար:

Փրկվեցին թե՛ այդ շրջանը, թե՛ այդտեղի հայությունը:

9. Այնուհետև լծվել են վտանգված Ղափանի և Արևիքի հայության ֆիզիկական գոյության պաշտպանության գործին՝ ետ մղելով մուսաֆաթական Ադրբեջանի և Նուրի, Խալիլ թուրք փաշաների պարբերական հարձակումները:

10. 1920-ի կեսերին Դրոյի զորամասի կողմից Ղարաբաղն ու Ջանգեզուրը լքելուց հետո՝ ստանձնել են բովանդակ Սյունիքի ինքնապաշտպանության գործը: Մեր այդ՝ աշխարհից բացարձակապես կտրված Լեռնաշխարհում, առանց բավարար հացի և ռազմամթերքի, առանց սպայական կադրերի և արտաքին որևէ օգնության, քաղաքականապես մենակ, շրջագծածն ճակատի վրա, ավելի քան մի տարի տևող անհավասար ու հաղթական կռիվներով՝ Սյունիքը, որը Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեզրանի միջև կնքված պայմանագրով հանձնված էր Ադրբեջանին, պարտադրում է իր կամքը Խորհրդային իշխանությանը. Մյասնիկյանի օրոք, իր 1921թ. հունիսի դեկլարացիայով Սյունիքը համարվում է կցված իր մայր երկրին՝ Հայաստանին:

Սյունիքի հերոսականի շնորհիվ փրկվեցին նաև Հայաստանի մտավորականները, Գ. Յ. Ղաշնակցությունը, հայ հեղափոխական և մարտական տարրերը:

11. Իմ կյանքն ու գործունեությունը կհաստատեն հետևյալ իրողությունները՝

- Ես միշտ երևան եմ եկել վտանգների ժամանակ: Խաղաղության օրով պաշտոններ չեմ փնտրել, քանզի չեմ սիրել: Վարել եմ միշտ ժողովրդական ուժեր, մի տեսակ պաղություն զգալով դեպի, այսպես կոչված «կանոնավոր» զորամասերը: Ղեկավար տարրերը քամել են ժողովրդից և վերջինները կաղապարել, եթե այսպես կարելի

¹ Թուրքերեն՝ «սպիտակ արծիվը»:

է ասել, ըստ իր պատկերի: Կռիվներում եղել են ՄԱՐԴ, ավելի քան մարդ, անգամ թուրք ու թաթարների դեմ՝ վկա գործառնասերիս ուղղված իմ հրամանագրերն ու կոչերը: Սովետական իշխանության կողմից ինձ վերագրվածները հասարակ հերյուրանքներ են, սահմանված ամեն զնով հակառակորդը վարկաբեկելու ձգտող պրոպագանդայի համար:

Ես երբեք չեմ օգտվել արտաքին ուժերից, անգամ հարազատ պետության միջոցներից: Առաջնորդվել եմ Մամիկոնյանների ուխտով: Եղել եմ խոր հավատքի և էթիկայի մարդ, և այդ իսկ պատճառով հաճախ դառնության բաժակներ դատարկել: Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը հատկացված են եղել Աստծուն և Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Դա է եղել իմ սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը: Միաժամանակ երկրի ժողովուրդը ջերմորեն կապվել ու կուրորեն հետևել է ինձ: Ինձ թշնամացել են սրբության զգացումից զուրկ կիսամտավորականն ու թուղթե (մրոտող) կանոններով ղեկավարվող միջակ գինվորականը:

Ռոժիկ չեմ ստացել ողջ կյանքում: (Այդ սկզբունքի դեմ մեղանչել եմ մի անգամ Ամերիկայում, ուր ընդունեցի, որ ինձ իբրև գործիչի շաբաթական տրվի: Մեղանչեցի և արդարորեն պատժվեցի: Այդ օրվանից մարդկային տմարդությունը ստվերիս պես հետևեց ինձ ամենուրեք): Հրաժարվել եմ անգամ օտար պետության սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու ամեն կարելիություն, սակայն ապրել եմ իբրև ժողովուրդի մարդ, համեստորեն, աղքատ կոչվելու աստիճանի: Նյութապաշտությունը հեղափոխականի, զորականի, հայրենասերի համար համարել եմ մեկը մեր աշխարհի ամենամեծ պղծություններից:

Հայաստանից հեռանալիս հետս առել եմ՝ Արաքսի հայկական ափում գինվորներիս կողմից զարնված վագրի մորթին՝ իմ միակ վարձատրությունը, Ջավալ փաշայի դաշունը՝ իմ միակ պատերազմական ավարը, Պարտությունն չտեսած Սյունյաց Դրոշակը - թո՛ղ դա դրվի կրճքիս վրա, գերեզմանիս մեջ - և մի հին Հայկազյան բառարան՝ իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ:

12. Հայր Հայաստանից դուրս ենթակա է վատասերումի: Այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինությունների և սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումով - մի բան, որ հիմնավորեցի և անվանեցի ցեղակրոնություն:

Դրա նպատակն էր՝ անհայրենիք հայությանը հոգևոր և քաղաքական անտուն-անտերությունից փրկելով, դարձնել հայրենատեր: Դա հայրենատիրական շարժում է, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանան հայության բոլոր հատվածները:

Իմ այդ ազգահոգ քարոզչության համար հայության հատվածականացած, ապահայրենացած ու պարտվողական տարրերը դավադրեցին ինձ:

Ներում եմ բոլորին, ներում կրկնակի պատճառներով - առաջին՝ իմ ազգային դավանանքը թույլ չի տալիս թշնամանք տածել դեպի որևէ հայ մարդ, երկրորդ՝ խորապես հասկանում եմ այդ դժբախտներին, որոնք դեռ չեն հաղթահարել ստրուկն իրենց մեջ, որով և մնացել են տկար ու չար:

Այսօր, իբրև հայրենակարոտ տարագիր՝ մի հատիկ ցանկություն ունեմ - Մեռնել Հայրենի Լեռների վրա:

13. Բուլղարիայում տեղի ունեցավ ռազմա-քաղաքական անցքերի հասունացրած պետական հարվածը: Սպասվում է Կարմիր բանակը: Գիտեմ թե ինչ է սպասում ինձ, բայց և այնպես որոշել եմ մնալ, հակառակ, որ կարելիություն ունեմ օդանավով ինձ նետելու վիե՛ննա: Զեմ հեռանում, որ հալածանքի չենթարկվեն մեր կազմակերպությունները: Մնալու ավելի լուրջ պատճառներ էլ ունեմ՝ ծանոթ երկու ընկերներին:

Եկավ սովետական բանակը, և տեղի ունեցավ այն, ինչ որ սպասում էի: Օգտվելով ստեղծված թոհուրոհից՝ իրենց ցեղի կաթով չմեծացած մի քանի վատասերված հայեր արդեն գործի են անցել: Նրանք - առավելապես կոշկակարներ՝ իբրև ոստիկանական լրտեսներ, հետները զինված բուլղար միլիցիոներներ առած - ընկած են տնետուն՝ ինձ են փնտրում:

Հավիտենորեն զգվելի ստրուկներ, որոնք տկարի իրենց չարությունը բավարարելու, իրենց հայագգի «թշնամիներ»-ը ոչնչացնել տալու սև նպատակով միշտ էլ օգտվել են օտար ուժերից:

Նվազ զգվելի չեն, սակայն նաև միայն անվանապես ազգայնական տարրերը: Իբրև շուկայի բարոյականի տեր էակներ՝ անասնանալու աստիճանի սնանկացած են նրանք: Ծանոթ, բարեկամ, ազգական՝ ոչ ոք իր դուռը կբանա առջևդ, եթե անգամ Նազովրեցու խաչն ուսիդ և փշե-պսակը արնածոր ծակատիդ իր պաշտպանությունը փնտրես: Մոռացան, մոռացան բոլորը, որ իմ թափած աշխատանքի շնորհիվ միայն ամբողջ չորս տարի զերծ մնալով իրեաների ճակատագրից՝ հարստացան ու հարստացան: Նրանք, որոնք դեռ երեկ

հայացքդ ու բարևդ կորսային, այսօր փախչում են անունիցդ, ստվերիցդ անգամ:

Կարմիրներն սպասում են ինձ: Յոթնիցս ստոր է նա, ով գերադասում է կյանքը մահից բոլոր պարագաների մեջ: Թող կատարվի անխուսափելին: Այսօր կյանքին ես կապված եմ այն չափով միայն, ինչ չափով որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Հայաստանին:

Ո՞ւր ես, ո՞ւր ես դու Հայաստանի տիրասիրտ ու պաշտելի ժողովուրդ, որի ոգին գիտցավ միշտ էլ վսեմանալ վտանգների ժամանակ:

Գաղութ, դու մի անգամ ևս ինձ ապրեցրիր անոթանքի ողբերգությունը՝ ամոթ քեզ...

Նժդեհ, 1944 սեպտեմբեր, Սոֆիա»

* * *

Ռուսերենին հրաշալի տիրապետող Նժդեհը դժվարություն չունեւ խորհրդային բանակի պարետատան ղեկավար կապիտան Իվանովի հետ զրուցելիս:

Որպեսզի տպավորություն չստեղծվեր, թե թաքնվում է խորհրդային բանակի ներկայացուցիչներից, Նժդեհը ինքը ներկայացավ պարետատուն:

Մինչ այդ, վերջին պահին ինչ-որ երկմտանք էր առաջացել ներկայանալ, թե՞ ոչ: Սակայն քաջորդին վանեց այդ կասկածը, առավել ևս տեսնելով, թե ինչպիսի մատնությունների ալիք է բարձրացել քաղաքում:

Վերջ ի վերջո ինքը գիտակցում էր, թե ինչ քայլ է կատարել՝ մնալով խորհրդային զորքերի գրաված տարածքում:

Իվանովը ուշադիր լսեց խորհրդային պարետատուն կամավոր ներկայացած Գարեգին Նժդեհին: Ապա իր դարակից հանված թղթերի վրա գրված ինչ-որ ազգանուններ կարդալով՝ կարգադրեց իր մոտ հրավիրել մայր Դերգաչին:

- Մի փոքր սպասե՛ք,- չհաջողված անտարբեր տոնով առաջարկեց Իվանովը,- հիմա կմտենա գվարդիայի մայր Բելենկինը և կլսի ձեզ:

Նժդեհը լռելյան գլխով արեց: «Հավանաբար Չեկայի աշխատակցին է կանչել,- մտածեց նա: - Դե ի՞նչ, այդպես էլ պետք է լիներ... Սպասենք»:

Կարճ ժամանակ անց սենյակ մտավ կլորադեմ, մեծ քթով մայորը, որը ձեռքով բարևելով պատիվ բռնած կապիտանին՝ դարձավ աթոռին նստած Նժդեհին:

- Կամավո՞ր եք ներկայացել: Ես կարծում էի, թե արդեն փախած կլինեք:

Նժդեհը ակամա ոտքի կանգնեց և գիտակցված հպարտությամբ պատասխանեց. - Այո՛, կամավոր եմ եկել: Ես ոչ մի տեղ փախչելու մտադրություն չեմ ունեցել և չունեմ:

- Հետաքրքիր է, շատ հետաքրքիր,- զարմանքը չկարողացավ թաքցնել մայորը,- այդ դեպքում բարի եղեք անցնել կողքի սենյակը, որտեղ մենք հնարավորություն կունենանք զրուցելու այդ և այլ հարցերի շուրջ:

* * *

Մայոր Բելենկինը որոշ ժամանակ ուշիմ զննում էր ընդգծված սպայական կեցվածքով մարդուն: Իրենց ցուցակներում, որպես խորհրդային երկրի թշնամի, դաշնակցական, խիստ վտանգավոր անձնավորություն է նշված Գարեգին Տեր-Հարությունյանը, որին պետք էր որոնել և ձերբակալել: Սակայն տեղի է ունեցել անսպասելին: Վտանգավոր համարվող զորավարն իր իսկ ոտքով է եկել պարետատուն: Գուցե՞ նոր խաղ է սկսել:

- Նախ ներկայացեք ո՞վ եք և ինչո՞ւ եք եկել,- առաջարկեց ծանրամարմին Բելենկինը:

- Թե ո՞վ եմ ես, կարծում եմ մանրամասները ձեզ այնքան էլ չպետք է հետաքրքրեն, քանզի համոզված եմ, որ դուք գիտեք, թե ում հետ եք զրուցում,- մաքուր ռուսերենով պատասխանեց Նժդեհը:

- Գիտենալը, իհարկե գիտեմ,- չթաքցրեց մայորը,- սակայն կուզենայի ձեզնից լսել այն:

- Այդ դեպքում կարճ պատմեմ կենսագրությունս, ապա բացատրեմ, թե ինչու եմ մնացել և կամավոր եկել ձեզ մոտ,- առաջարկեց սպարապետը:

- Լավ,- համաձայնվեց Բելենկինը՝ վառելով ձեռքի ծխախոտը:

Նժդեհը պատմում էր իր կենսագրությունը: Մայոր Բելենկինը՝ ռազմական հակահետախուզության սպան, իսկապես բավականին տեղեկություններ ուներ Գարեգին Նժդեհի մասին: Նա որոշ ժամանակ զբաղվել էր գերմանական բանակում ներգրավված լեզիոններով, այդ թվում և հայկական լեզիոնով, որտեղից նրան հայտնի էր առասպելի վերածված այդ անձի ով լինելը: «Թունդ դաշնակցական», որին

հեռացնում են այդ կուսակցության շարքերից, թունդ ազգայնական, որը հայտնվում է իր հայրենիքի դեմ փաստացի պատերազմող Գերմանիայում, գործակալներ է ուղարկում Ղրիմ...

Բելենկիին նաև քաջ հայտնի էր, որ Կենտրոնում դրական էին վերաբերվում հայ լեզիոններին, վերջիններիս համարում էին, համեմատաբար, վստահելի, Գերմանիայի դեմ գաղտնի ընդվզողների, որոնք ի տարբերություն այլ ազգերի լեզիոնների, զենք չեն բարձրացրել խորհրդային բանակի դեմ, ավելին, երբ փորձել են նրանց օգտագործել ռազմաճակատին մոտ տարածքներում, ապա տեղի են ունեցել զանգվածային անցումներ Կարմիր բանակի կողմը: Եվ այդ լեզիոնների կազմակերպման մեջ մեծ դեր է խաղացել Գարեգին Տժդեհը:

Բելենկիինը մի ծխախոտ էլ վառեց և ավելի ուշադիր սկսեց լսել իր զրուցակցին:

- Եթե կարճ պատմեմ, ես իմ նախածեռնությամբ եմ դուրս եկել Գերմանիայի քաղաքական ղեկավարության վրա,- շարունակեց Գարեգին Տժդեհը: - Ղա անհրաժեշտ էր իմ ազգի անվտանգությունը ապահովելու նպատակով: Ես տեսնում էի այն վտանգը, որ հասունանում էր իմ ազգի համար նացիստական Գերմանիայում: Նախապատրաստվում էր հրեաների ճակատագիրը, և մեծ աշխատանք պահանջվեց, որպեսզի ապացուցեմ, որ հայ քրիստոնյաները արիացիներ են, այսինքն ուղղակի հարվածը հասել են իմ ազգի վրայից: Մյուս խնդիրը եղել է հայերին, այդ թվում և գերի ընկած հայերին, օգնել հնարավորինս անկորուստ կրել օբյեկտիվորեն առաջացած դժվարությունները: Դրանով է բացատրվում իմ մասնակցությունը հայկական լեզիոնների կազմավորմանը: Եվ վերջապես, գուցե ձեզ անհավատալի թվա, սակայն այսքան պայքարից հետո ես եկել եմ միանշանակ մի եզրակացության, որ միայն ռուս ազգի օգնությամբ կարող է հարատևել հայը, որ մեր երկու ազգի շահերից է բխում պայքարը Թուրքիայի դեմ, երկիր, որն իմ ազգի, իմ ժողովրդի թշնամին է եղել և այժմ էլ այդպիսին է: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել այդ երկրի դեմ պայքարում: Ես ունեմ հնարավորություններ և պատրաստ եմ դրանք տրամադրելու խորհրդային իշխանություններին:

- Չափազանց հարթ ու հասկանալի չստացվե՞ց ձեր բացատրությունը,- հանկարծ ընդհատեց Բելենկիինը:

- Անշուշտ, ես լավ հասկանում եմ, որ ինձ գրկաբաց չեք ընդունելու: Գիտեմ, որ պետք է ստուգեք: Պետք է համոզվեք: Ես գրեթե չեմ կասկածում, որ ինձ բանտարկելու եք: Սակայն խնդրում եմ հաշվի առնեք, ես իրավ կարող էի հեռանալ, սակայն մնացել եմ: Առայժմ սա

իմ միակ հավատի արժանի քայլն է, ուստի սպայի խոսք եմ տալիս, որ ես անկեղծ եմ...

* * *

Ուկրաինական Երրորդ ռազմաճակատի «Սմերչ» հակահետախուզական վարչության պետ գեներալ-լեյտենանտ Իբաշուտինը գլուխը բարձրացրեց աշխատասեղանի վրա դրված թղթերից, որտեղ գրված էր՝ Գարեգին Տեր-Յարությունյան, կեղծանունը «Նժդեհ», ծնվել է 1886թ. Էրիվանի նահանգի Նախիջևան քաղաքում, «Դաշնակցություն» կուսակցության անդամ 1907-1937թթ., Դաշնակցական բանակի նախկին գեներալ, արտագաղթել է Ռուսաստանից 1921թ., բուլղարահպատակ, մասնագիտությամբ լրագրող, ապրել է ք. Սոֆիա, Ցար Բորիս փ., տ. 92:

Նայեց սենյակում գտնվող 4-րդ բաժնի պետ գվարդիայի մայոր Բելենկինին և կարգադրեց.

- Բերեք այդ հայ գեներալին: Շատ հետաքրքիր անձնավորություն է երևում:

- Յետաքրքիր և խելացի,- համարձակվեց ավելացնել մայորը և դուրս եկավ:

Գարեգին Նժդեհին պայմանականորեն դեռ չէին ձերբակալել, սակայն այդ օրը՝ 1944թ. հոկտեմբերի 12-ին Իբաշուտինը որոշեց անձամբ սկսել պաշտոնական հարցաքննությունը: Երեկոյան ժամը տասն էր: Երբ ներս մտավ զինվորական կեցվածքով Նժդեհը, գեներալ-լեյտենանտը ծանոթ զգացողություն ունեցավ: Նա ժամանակին շատ էր շփվել սպիտակ բանակի նախկին սպաների հետ, որոնցից կային նաև այժմ գործող բանակում, և նկատել, որ նրանց կարելի է տարբերել ինչ-որ անբացատրելի շարժ ու ձևից: Ինչևիցե: Գեներալ-լեյտենանտը նայեց գեղեցկադեմ զրուցակցին, ապա առաջարկեց նստել.

- Դե ինչ, գեներալ, կարծում եմ հարկ չկա ասելու, որ պետք է բացատրություններ ստանանք ձեր գործունեության մասին: Առաջարկում եմ լինել անկեղծ: Ուրեմն սկսենք: Երբ վանի՞ց եք ապրում Բուլղարիայում:

- Բուլղարիայում, մասնավորապես Սոֆիայում, ապրում եմ 1922թ.-ից: 1921թ. Ռուսաստանից վտարանդի դառնալով կանգ եմ առել Պարսկաստանում, որտեղ ապրել եմ շատ քիչ ժամանակ, ապա տեղափոխվել եմ Կոնստանդնուպոլիս, իսկ 1922-ին մեկնել եմ Բուլղարիա, որտեղ ապրում եմ մինչև օրս,- հանգիստ պատասխանեց

Նժդեհը, հասկանալով, որ սկսվում են իր համար ճակատագրական հարցաքննությունները, որոնցից շատ բան է կախված լինելու:

- Ի՞նչով էիք զբաղվում Բուլղարիայում ապրելու ժամանակ,- ուշադիր աչքերին նայելով՝ հակիրճ հարցրեց գեներալ-լեյտենանտը:

- Բուլղարիայում ապրելու ժամանակահատվածում զբաղվել եմ լրագրությամբ, աշխատել եմ Սոֆիայում հրապարակվող բուլղարական գրական «Սվետոզլաս» թերթում, ինչպես նաև Ամերիկայում լույս տեսնող «Հայրենիք» թերթում, և մինչև կուսակցությունից դուրս գալս՝ դաշնակցական «Արաքս», ապա դրանից հետո՝ «Ռազմիկ» թերթերում:

- Ի՞նչ դիրք էիք դուք գրավում «Դաշնակցություն»-ում և որո՞նք էին այդ կուսակցությունից դուրս գալու պատճառները:

- Կուսակցությունում աչքի ընկնող դիրք եմ գրավել: Աշխատելով որպես լրագրող՝ ես «Դաշնակցության» Բուլղարիայի կենտրոնական կոմիտեի անդամ էի: Դաշնակցությունից դուրս եմ եկել 1937թ., բյուրոյի ղեկավար Ռուբեն Տեր-Մինասյանի նկատմամբ անձնական հակակրանքի պատճառով: Այդ ժամանակից կուսակցության շարքերում չեմ, սակայն զբաղվել եմ հասարակական աշխատանքներով:

- Ռուսաստանից դուրս գալուց հետո, բացի Բուլղարիայից, ուրիշ ո՞ր երկրներում եք ապրել:

- Որոշ ժամանակ, 1933-34թթ., մոտ 20 ամիս ապրել եմ Ամերիկայում, որտեղ աշխատել եմ Կարմիր Խաչի կազմակերպություններում: 1926թ. և 1941թ. ապրել եմ Ռումինիայում՝ շրջագայելով որպես լրագրող: 1933թ. Ամերիկա մեկնելուց առաջ, մոտ 2 ամիս, գտնվել եմ Փարիզում: 1937-ին, «Դաշնակցություն» կուսակցությունից իմ դուրս գալուց առաջ, կանչվել եմ Կահիրե, մեր կուսակցության բյուրո, որտեղ փորձում էին ինձ հաշտեցնել Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Կահիրեում մնացել եմ մոտ երկու ամիս:

1942-1943թթ. երկու անգամ եղել եմ Գերմանիայում, Բեռլինում, որտեղ ապրել եմ մոտ 6 ամիս...

- Արի մի փոքր ընդմիջում անենք: Թեյ կխմենք, ապա կշարունակենք:

Նժդեհը, անխոս, հավանության նշան տվեց: Նա լավ հասկանում էր, որ փորձված գեներալ-լեյտենանտը ո՛չ միայն ցանկություն ունի թեյ խմելու, այլև ինչ-որ հարցեր ճշտելու՝ հետագա զրույցի համար: Եվ պատահական չէ, ոչ իրեն թողեց մայրի հետ: Վերջինս ընդհանուր զրույց էր սկսել Բուլղարիայի, ապա Ռուսաստանի բնության, հետո գրականության մասին: Ի միջի այլոց հարցրեց, թե վերջին անգամ ե՞րբ է եղել Հայաստանում: Մի՞թե չեն հավատում, որ ինքը 1921-ից հետո

Հայրենիք ուտք չի դրել, ինչից և մղկտում է սիրտը: Լավ, այդ մանկական փորձերը՝ պաշտոնական հարցազրույցից զատ այլ տեղեկություններ ստանալու ուղղությամբ, իրեն չեն անհանգստացնում: Ավելի կարևոր էր կրկին ճշտել իր հոգու, խղճի, հանգստության առումով, արդյոք ճշմարտությունը ներկայացնելով չի՞ վնասի այլ անձանց: Իհարկե, միամիտ պետք է լինել մտածելու, թե ռուսական հետախուզությունը չգիտե իր գործունեության մասին: Դա զրեթե բացահայտ է կատարվել: Բուլղարիայում Հայկ Ասատրյանի միջոցով կամավորներ է հավաքագրել Գերմանիայի հատուկ դպրոցում ուսանելու համար: Չէ՞ որ այդ մասին գիտեին ո՛չ միայն հավաքագրված 31 երիտասարդները, այլև նրանց հարազատներն ու մտերիմները: Կամ, որ նրանց հետագայում ուղարկել են Ղրիմ: Բնական է, որ դա էլ թաքուն պահելու հարց չէ: Այստեղ կարևոր է, որ նրանք, ըստ էության, ո՛չ մի որոշակի քայլ չեն կատարել Խորհրդային Միության դեմ: Վերջ ի վերջո, իմ նպատակն է եղել գործել Թուրքիայի դեմ, թեկուզ Գերմանիայի շահերից ելնելով և, եթե անգամ դա Սատանայի շահերի հետ համընկներ՝ ես կհամաձայնվեի: Ընդհանուր առմամբ, իմ գործունեության օբյեկտիվ քննությունը ցույց կտա, կհամոզի նրանց, որ ես էական վնաս չեմ հասցրել իրենց: Բնական է, որ բուլղարիկների աչքին աղավմի չեմ կարող ներկայանալ, բնական է, որ պատերազմի ժամանակ վրիպումներ, սխալներ լինում են, սակայն վերջնական արդյունքն է կարևորը: Ուրեմն ես կպատմեմ ճշմարտությունը, ես դեռ պետք եմ իմ ազգին:

* * *

Իբաշուտիները դուրս եկավ և իր աշխատասենյակ գնալու ճանապարհին կարգադրեց բերել Սեմյոն Բուրևի հարցաքննության արձանագրությունը:

Փորձված հետախույզը հասկանում էր, որ պատերազմը առավել ցայտուն է դարձրել մարդկանց անկանխատեսելի ճակատագրերը: Ահա՛, ինքը կրկին շփվում է մի մարդու հետ, որն ակնհայտորեն խելացի և ամուր անձնավորություն է: Սակայն միամտորեն հավատալ նրա ասածներին՝ չէր կարող:

Իբաշուտիները թերթում էր Բուրևի հարցաքննությունների արձանագրությունները, ապա մի պահ կանգ առավ դրանցից 1944թ. հունիսի 22-ի ամսաթվով նշվածի վրա.

« *Հայր* - Պատմեք զեներալ Նժդեհի գործունեության մասին ձեզ հայտնի տեղեկությունները:

Պատասխան - Նժդեհին ճանաչում են 1937թվականից: Նրա հետ ինձ ծանոթացրել է մակեդոնացի Դմիտրի Լյապովը: Վերջինս նրան ինձ երաշխավորեց որպես ամենաազնիվ հայի, դաշնակցական բանակի նախկին գեներալի: Մենք ընկերներ դարձանք, այցելում էինք միմյանց, շատ էինք խոսում քաղաքականությունից:

Նժդեհը հայերեն լեզվով թերթ էր հրապարակում և ղեկավարում էր տեղի հայ ազգայնականներին: Ստամբուլում 1937թ. ինչ-որ առիթով հարցրեց, թե արդյոք կապեր չունե՞մ գերմանական դեսպանատան հետ: Նրան դեսպանատան հետ կապը անհրաժեշտ էր հետևյալ պատճառներով: Նա ինձ ասաց, որ հայ ազգայնականները Բուլղարիայում հուշագիր են հրապարակել այն մասին, որ իրենք մաքուր արիացիներ են և ո՛չ մի առնչություն չունեն սեմականների հետ: Դրա համար իրեն պետք էր կապվել գերմանական դեսպանատան հետ, որպեսզի Գերմանիայի արիացիներին հայտներ, որ իրենք շատ ընդհանրություններ ունեն, և, եթե Գերմանիան պատերազմ սկսի, ապա առաջինը հարձակվի Թուրքիայի վրա, իսկ հայերը նրանց կօգնեն այդ գործում և մորիլիզացիա կանցկացնեն Բուլղարիայում: «Միայն այդպես, մենք՝ հայերը և մակեդոնացիները ազատություն կստանանք», - ասում էր նա ինձ: Ես պատասխանեցի Նժդեհին, որ գերմանական դեսպանատանը ծանոթներ չունեն և խորհուրդ տվեցի դիմել բանաստեղծ Թեոդոր Տրայանովին, սակայն ո՛չ մի կերպ չէր վճռում վերջինիս դիմել, քանի որ նրան անլուրջ մարդ էր համարում:

Հետագայում մենք Նժդեհի հետ հաճախ էինք հանդիպում ընկերական միջավայրում: Այդպես հանդիպում էինք առ 1941 թվականը, մինչև Սոֆիա եկավ Մերձավոր Արևելքում և Բալկաններում գերմանական հետախուզության ղեկավար դոկտոր Դելիուսը:

Ինչպես արդեն հայտնել են՝ Դելիուսը ինձանից խնդրեց անհրաժեշտ մարդիկ ընտրել, որոնք կարող են աշխատել Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Մերձավոր Արևելքի այլ երկրների դեմ: Այդ ժամանակ ես հիշեցի Նժդեհի խնդրանքը գերմանացիների հետ ծանոթացնելու մասին և նրա թեկնածությունն առաջարկեցի Դելիուսին:

Իմ միջոցով Դելիուսը ծանոթացավ Նժդեհի հետ, և, փաստորեն, իր օգնականը դարձրեց Թուրքիայի և Հունաստանի դեմ աշխատանքներում:

Ինչպես արդեն ցուցմունք են տվել, Նժդեհը Սալոնիկից կանչեց հայ Գարոյին և նրա միջոցով կազմակերպեց գործակալ հետախույզների ներդրումը Հունաստան:

Ստամբուլից կանչեց մի հայ կնոջ, որին ես չեմ տեսել և նրա միջոցով նույնպես Թուրքիայում ստեղծեց գործակալների ցանց...

Նժդեհին անձամբ Դելիուսից հետախուզական աշխատանքների համար փող էր ստացել: Նա աշխատում էր զուտ թուրքիայի դեմ պայքարելու գաղափարի և Գերմանիային օգնելու համար:

Գերմանա-խորհրդային պատերազմի ժամանակ և մինչև այդ պատերազմը, Նժդեհը Դելիուսից պահանջում էր հանդիպում կազմակերպել գերմանական կառավարության հետ, որպեսզի համաձայնության գա Հայկական հարցի մասին, ներկայացնի իր ծրագիրը և գործի այդ ծրագրով:

Դելիուսը հանդիպումը չկազմակերպեց և Նժդեհը դժգոհ էր Դելիուսից: Դելիուսը հենց այդպես էլ ասում էր. «Ինձ քաղաքականությունը չի հետաքրքրում, ինձ գործակալներ են պետք և լրտեսություն»:

1942թ., երբ ես Վեբերից մամակ ստացա, որով ինձանից խնդրում էր գտնել մեծ կապեր ունեցող որևէ մշակավոր հայի, ես նրան գրեցի Նժդեհի մասին: Վեբերին դուր եկավ Նժդեհի թեկնածությունը և նա պահանջեց, որ ես Նժդեհի հետ մեկնեմ Բեռլին:

Գերմանական հրամանատարության հետ Բեռլինում Նժդեհի բանակցությունների մասին ես արդեն ցուցմունք տվել եմ:

Բեռլինից վերադառնալուց հետո, երբ ես Դելիուսին պատմեցի Նժդեհի ճանապարհորդության մասին, նա դժգոհ մնաց Նժդեհի գործողություններից և, իմ կարծիքով, նույնիսկ խզեց կապը Նժդեհի հետ...»:

Ընթերցելիս՝ գեներալը խմում էր մատուցված թեյը և մտածում: Նախնական տվյալներով, կարծես թե բոլոր հարցաքննվողները շատ միանման ցուցմունքներ են տալիս: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Նժդեհը իսկապես ձգտել է թուրքիայի դեմ գործել և գուցե առավել կարևորը՝ փրկել հայերին գերմանացիների հնարավոր հալածանքներից: Բայց, արդյո՞ք ամեն ինչ ստացվել է այնպես, ինչպես ինքն է ցանկացել: Ինչո՞ւ հավատալ այդ հային:

* * *

Իբաշուտիմը ներս եկավ: Գիշերային թեթև ընթրիքը ավարտվել էր: Նա նստեց Նժդեհի առաջ, և, առանց նախաբանի, ասաց.

- Շարունակենք: Մենք կանգ առանք Դելիուսի հետ ձեր զրույցի վրա:

- Զրույցի ընթացքում Դելիուսը նկատեց, որ գերմանացիները հետաքրքրվում են թուրքիայով, որտեղ շատ հայեր են բնակվում և հարցրեց, թե կարո՞ղ են օգնել նրանց թուրքիայում գտնելու մեկին, որը կարող է օժանդակել իրենց հետախուզությանը:

Ես պատասխանեցի, որ կարող եմ և նույն պահին տվեցի մի հայ բանաստեղծուհու անուն, որը ցանկություն ունի դուրս գալ թուրքիայից, սակայն չէր կարողանում իշխանություններից թույլտվություն ստանալ: Եթե նրան օգնեն այդ հարցում, ապա կստանան համապատասխան տեղեկատվություն: Դելիուսը իսկույն իր մոտ նշեց իմ տված ազգանունը՝ Դադարյան ու վերջինիս հասցեն, ասելով, որ իրենց հետաքրքրում է թուրքական բանակի մարտունակության, ոգու վիճակը, երկրի տնտեսական դրությունը, ժողովրդի տրամադրությունը և, եթե նա օգնի այդ հարցերում, ապա գերմանացիները կօժանդակեն նրան Վիեննա՝ հարազատների մոտ գալու հարցում: Ինչը և հետագայում տեղի ունեցավ:

- Գերմանական հետախուզության ուրիշ ո՞ր ներկայացուցիչների հետ եք հանդիպել:

- Բեռլինում Դրումի հետ: Նա ներկայացավ որպես նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամ: Զրույցի ժամանակ Դրումը հարցրեց, թե մենք ի՞նչ ենք ուզում գերմանացիներից: Պատասխանեցի, որ ցանկանում ենք վերջ տալ սկսված հակահայկական քարոզարշավին: Լսելով այդ, Դրումն ասաց, որ գերմանական իշխանությունները թույլ կտան հայերին Բեռլինում տպել իրենց թերթը (հետագայում դա չկատարվեց), ինչպես նաև մեզ երկու տեղ կտրվի Բեռլինում ստեղծվող հայկական կոմիտեում, որի շնորհիվ կկանխվի այդ քարոզարշավը, ապա հետաքրքրվեց, թե մենք ի՞նչ կարող ենք անել իրենց համար: Ես առաջարկեցի Բեռլինում դպրոց հիմնել հայերի համար, որտեղ սովորելու համար երիտասարդներ կտրամադրենք: Դրումն իսկույն կառչեց այդ առաջարկից և հանձնարարեց 50 երիտասարդներ ուղարկել Բուլղարիայից Բեռլին՝ սովորելու համար: Նպատակը՝ երբ մոտենային սահմաններին, նրանց խորհրդային Չայաստան ուղարկելն էր, որպեսզի ներսից օգնեին գերմանացիներին արագ ազատագրելու Չայաստանը բուլշևիկյան բանակից: Դրումը նշեց նաև, որ Կարմիր բանակի նահանջի հետ ազգաբնակչության մեծ մասը գնում է հետները, իսկ իրենք ցանկանում են, որ մնան: Անդրադառնալով գերմանացիների ապագա պատերազմին թուրքիայի հետ, նա ասաց, որ այդ երիտասարդները կկազմակերպեն տեղի հայերին պայքարելու թուրքերի դեմ:

- Երկրորդ անգամ ի՞նչ նպատակներով մեկնեցիք Բեռլին:

- Որպես վերոնշված կոմիտեի անդամ, պետք է լինեի այնտեղ, և, ավելի կարևորը՝ ինձ հետքրքրում էր այն երիտասարդների ճակատագիրը, որոնք արդեն սովորում էին դպրոցում:

- Այդ անգամ գերմանական հետախուզության ներկայացուցիչներից ո՞ւմ հետ հանդիպեցիք:

- Գալով Բեռլին՝ այնտեղ ինչ-որ գրքի թարգմանության համար գտնվող Չայկ Ասատրյանի հետ գնացինք Յոհեն-Բինդեյում գտնվող դպրոցը, որտեղ մեզ ընդունեց դպրոցի պետ Ռոբերտ Յոֆմանը: Նրանից իմացանք, որ Դրումն այլևս որևէ գործ չունի դպրոցի հետ և այն ղեկավարում է հետախուզության ներկայացուցիչ էյնգել Չաուպտը, ում հետ և հանդիպեցիք...

Գեներալ-լեյտենանտ Իբաշուտինը կրկին հոգնած հայացք նետեց ժամացույցին, որը ցույց էր տալիս գիշերվա ժամը 1-ը:

- Ո՞վ է քեզ հետ մեկնել Բեռլին:

- Առաջին անգամ, 1942թ. հոկտեմբերին Բեռլին եմ մեկնել իմ լավ ծանոթ Սեմյոն Իվանովիչ Բուրևի հետ, երկրորդ անգամ մեկնել եմ մենակ՝ 1943թ. աշնանը:

- Ո՞վ է Բուրևը և ինչո՞ւ էր նա ձեզ հետ մեկնել Բեռլին:

- Բուրևը Բալկաններում հայտնի հասարակական գործիչ է: Նրան ես գիտեմ վաղուց, մոտ 20 տարի: Բուրևը ինձ հետ թռավ Բեռլին, որպեսզի ինձ կապեր գերմանական հետախուզության ներկայացուցիչների հետ, չնայած որ ես այն ժամանակ չգիտեի, թե կհանդիպեմ հետախուզության ներկայացուցիչներին, քանի որ նախապես պայմանավորվել էինք հանդիպել նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ներկայացուցիչների հետ:

- Ի՞նչ հարաբերություններ ունեիք գերմանական հետախուզության հետ.

- Ես համագործակցում էի գերմանական հետախույզների հետ: Նրանց հետ ինձ կապել էր Բուրևը 1941թ.: Դա տեղի է ունեցել հետևյալ ձևով: Մինչև 1941 թվականը, մինչև գերմանացիների պատերազմը Խորհրդային Միության դեմ, ես հանդիպել եմ Բուրևի հետ և վերջինիս ասել, թե գերմանական մամուլը հակահայկական քարոզարշավ է սկսել, որ Գերմանիայում հայ ազգի ռասայական պատկանելիության հարցն է քննվում:

Բուրևն այդ կապակցությամբ ասաց, որ ես պետք է խոսեմ գերմանացիների հետ՝ Սոֆիայում գտնվող գերմանական պատվիրակության անդամների հետ և նրանց ապացուցեմ, որ հայերն արիական ծագում ունեն: Դրա համար ես և փիլիսոփայության դոկտոր Չայկ Ասատրյանը գնացինք գերմանական հյուպատոսարան, կապվեցինք վերջինիս ներկայացուցիչ դոկտոր Լևալդի հետ, որին ներկայացրինք մի քանի զեկուցագրեր այդ մասին, սակայն Լևալդից ո՛չ մի պատասխան չստացանք:

Պատերազմը սկսվելուց հետո տեսակցեցի Բուրևի հետ, և ընդհանուր զրույցի ընթացքում պատմեցի վերոհիշյալ հանդիպումների արդյունքների բացակայության մասին: Այդ ժամանակ Բուրևն ասաց, որ Սոֆիայում են գտնվում գերմանական հրամանատարության ներկայացուցիչները, որոնք կարող են օգնել այդ հարցում: Ես ցանկություն հայտնեցի հանդիպել նրանց հետ:

Մի քանի օր անց Բուրևի տանը հանդիպեցի փոխգնդապետ Դելիուսի հետ:

- Ի՞նչի մասին է զրուցել Դելիուսը ձեզ հետ,- խոժռվեց գեներալ-լեյտենանտը:

- Ես Դելիուսին պատմեցի, որ արհեստականորեն ապառոջ մթնոլորտ է ստեղծվում հայերի դեմ, որը, ցավոք, օժանդակություն է ստանում գերմանական մամուլում և արձագանքի մման տարածվում բուլղարական մամուլում, ուստի խնդրեցի հայերիս օգնել:

Դելիուսը ասաց, որ ինքն այստեղ ոչինչ չի կարող անել և խորհուրդ տվեց մեկնել Բեռլին ու այնտեղ բարձրացնել այդ հարցը...

Գեներալ-լեյտենանտ Իբաշուտինը աչքը նետեց ձեռքի ժամացույցին: Գիշերվա ժամը երկուսն էր: Նայեց հանդարտ ձայնով ցուցմունքներ տվող Նժդեհին, ապա ընդհատելով առաջարկեց.

- Բավականին ուշ է, զրույցը կշարունակենք վաղը: Կարծում եմ, որ այսօր բավական է: Այժմ ստորագրիր հարցաքննության արձանագրության բոլոր էջերը և տուն վերադարձիր:

- Կներեք, պարոն գեներալ-լեյտենանտ, սակայն ես ինչ-որ անորոշություն եմ զգում իմ դրության մեջ:

- Մի՞թե ուրիշ վերաբերմունք էիք սպասում մեզնից,- զարմացավ Իբաշուտինը: - Կարծում եմ, որ դժգոհություն արտահայտելու որևէ հիմք չունեք, եթե ոչ հակառակը:

- Չունեմ, իհարկե չունեմ: Սակայն ես չէի ցանկանա անորոշության մեջ մնալ:

- Չես մնա,- խոստացավ գեներալը: - Վաղը կամ մյուս օրը ինքնաթիռով կթռչես Մոսկվա և այնտեղ ամեն ինչ կիստականա:

- Ես պատրաստ եմ,- իսկույն արձագանքեց Նժդեհը,- ինչքան շուտ պայմանավորվենք, այնքան լավ ինձ համար:

- Ի՞նչ, պայմանավորվե՞լ,- այս անգամ զարմացավ Իբաշուտինը,- մի՞ մոռացեք, որ դուք պետք է ապացուցեք ձեր նախկին գործունեությունում մեր երկրի նկատմամբ ցույց տված չեզոքությունը: Այն ինչ պատմեցիք այսօր, արդեն իսկ բավական է, որպեսզի ինչ-որ պայմանավորվածությունների մասին խոսք չլինի:

- Ես սպա եմ, ես հայ եմ և իրադրությունը վերլուծելու ունակություն ունեմ: Ես որևէ հանցավոր քայլ իմ երկրի հանդեպ չեմ կատարել և պատրաստ եմ համեստ, կներեք անկեղծ պոռթկումիս համար, առավել քան համեստ կարողություններս ու հնարավորություններս ծառայեցնել իմ Ազգի, իմ Հայրենիքի շահերին, որոնք այժմ նույնն են, ինչ Խորհրդային Միության շահերը:

- Լավ, այսօր առանց այդ էլ շատ երկար զրուցեցինք, սպարապետի խոսքն ընդհատեց գեներալ-լեյտենանտը: - Ես հարգանքով եմ համակված դեպի ձեր անձը, գեներալ: Դուք, անկախ նրանից՝ ինձ հաճելի՞ եք, թե՞ ոչ, տղամարդուն վայել կենսագրություն ունեք, սակայն խորհուրդ կտայի առավել ճիշտ գնահատել ներկա իրադրությունը: Ամեն դեպքում՝ ես ձեզ հրաժեշտ չեմ տալիս: Մոսկվա մեկնելուց առաջ կարծում եմ դեռ կհանդիպենք:

* * *

1944թ. նոյեմբերի 4-ին Մոսկվայում գտնվող բանտախցից հարցաքննության էին տանում կալանավորված Գարեգին Նժդեհին: Նա մի քանի օր առաջ Սոֆիայից ինքնաթիռով եկել էր Մոսկվա: Մենակ: Ենթադրում էր, որ համոզել է իր հետ այդ ամիսներին հարցաքննություններ կատարող, Ուկրաինական Երրորդ ռազմաճակատի հակահետախուզության՝ Սմերչի աշխատակիցներին, որ ինքը, իր կարծիքով, աննշան գործողություններ է կատարել պատերազմի ընթացքում ԽՍՀՄ-ի դեմ, ապա հետագա գործողություններով, նրանց օգնելու պատրաստակամություն ցույց տվել: Երբ առանց ուղեկցողի նստեց ինքնաթիռ, տրամադրությունը փոքր ինչ բարձրացավ: Եթե իրեն վտանգավոր հանցագործ համարեին, ապա մենակ չէին ուղարկի Մոսկվա: Եվ այդ տրամադրությունը ջարդուխուրդ եղավ Մոսկվայի օդանավակայանում: Նրան դիմավորեցին և միանգամից տարան բանտ: Ուրեմն չեն հավատացել, ուրեմն կասկածում են, ուրեմն զուր էին անցել երկու ամիսների իր ջանքերը:

Սիրտը ճմլվում էր: Մի՞թե սխալվեց:

Քննիչ մայոր Պուտինցևը կարծես տեղյակ չէր իր նախկին հարցաքննությունների բովանդակությանը և սկսեց ճշտել, թե ո՞րն է իր իսկական ազգանունը, ապա հարցրեց, թե ի՞նչով էր զբաղվում Բուլղարիայում:

- Ես հին հայ ազգայնական եմ,- ներքուստ բարկացած պատասխանում էր Նժդեհը: - Տարագրության մեջ գտնվելու ողջ ժա-

մանակահատվածում վարել են ակտիվ հակախորհրդային գործունեություն, պայքարել են Հայաստանը ԽՍՀՄ-ից անջատելու համար...

Կարծես իրականությունից կտրված՝ սպարապետը մեքենայորեն պատասխանում էր հարցերին, մինչդեռ նա մտռոք սուզվել էր անցյալի գիրկը: Կռիվներ, անընդմեջ, դաժան ու ծանր կռիվներն էր հիշում: Հիշում էր Թուրքիայում հայերի աննախադեպ կոտորածի դեմն առնելու համար կազմած կամավորական ջոկատները: Աշխարհի բոլոր ծայրերից Ռուսաստան էին գնում ազգի լավագույն զավակները: Ցարական Ռուսաստանում որպես հեղափոխական հալածվող և Բուլղարիայում գտնվող Նժդեհը դիմեց Ռուսաստանի ներկայացուցիչներին: Ցնծությունն անսահման էր, քանզի թույլատրեցին նրա մուտքը Ռուսաստան, և, շուտով, Գարեգին Նժդեհը Հայկական կամավորական 2-րդ ջոկատի հրամանատար Դրոյի տեղակալն էր: Բալկանյան 1912թ. պատերազմի տարիներին Անդրանիկի հետ նա թուրքերի դեմ հերոսաբար մարտնչեց... եղելություններ, հուշեր, խոհեր...

Իսկ քննիչն արդեն անցել էր Դրոյի արտասահմանյան գործունեությանը վերաբերող հարցերին: Կարծես թե իրենց հայտնի չեն այդ փաստերը, և անպայման ինքը՝ Նժդեհը պետք է պատմեր, որ Դրոն 1938թ. ընտրվելով Դաշնակցության բյուրոյի կազմում, պարբերաբար կապեր էր հաստատում տարբեր երկրների հատուկ ծառայությունների հետ: Նա, լինելով Բալկանների դաշնակցական կազմակերպության ղեկավարը, կապվել էր ռումինական գաղտնի ծառայությունների՝ Սիզուրանցիայի, ինչպես նաև, գերմանական ծովային հետախուզության կապիտան ֆոն Վետշտեյնի հետ:

1940թ. Դրոն Բուխարեստում հրավիրեց Բալկանյան երկրների դաշնակցական կազմակերպությունների համագումար, որտեղ որոշում կայացրեցին գերմանացիների հետ համագործակցելու և ԽՍՀՄ-ի դեմ քայքայիչ գործունեությունը ուժեղացնելու մասին...

Հիմա էլ քննիչն անցավ դաշնակցականների և մենչևիկների հարաբերություններին...

Անցան մի քանի տաղտկալի ու ճնշող օրեր: 1944թ. նոյեմբերի 18-ին մայր Պուտինցևը Գարեգին Նժդեհին ներկայացրեց «Սմերշ» հակահետախուզական գլխավոր վարչության քննչական բաժնի պետ, գեներալ-մայոր Լեոնովի կողմից հաստատված՝ իր անձի նկատմամբ առաջադրված մեղադրական որոշումը:

Նժդեհը հասկացավ, որ դա հավասարազոր էր դատավճիռի, ի՞ր դատավճռին:

Հարցաքննությունները հետևում էին մեկը մյուսին: Այդպես անցավ երկու տարի: 1946թ. նոյեմբերի 1-ին Գարեգին Նժդեհին նստեցրին գնացք և ուժեղ հսկողության տակ տարան ինչ-որ ուղղությամբ...

* * *

ՀԽՍՀ Պետանվտանգության նախարարության բաժնի պետ գնդապետ Արոյանը առանձնացրեց իր երկու աշխատակիցներին, հատուկ զգուշացրեց զաղտնիությունը ապահովելու անհրաժեշտության մասին և ուղարկեց կայարան: 1946թ. նոյեմբերի 14-ն էր: Ցուրտ ձմռան շունչը պատել էր Երևանը: Գնդապետ Արոյանը սպասում էր Մոսկվայից Երևան տեղափոխվող Գարեգին Նժդեհին, որի հետագա քննությունը ԽՍՀՄ ՊԱՆ-ի ղեկավար Աբակունովի կարգադրությամբ պետք է շարունակվեր Հայաստանում:

Նույն հարցերը, կրկին մանրամասների պարզաբանում, հարցաքննություն, հարցաքննություն...

1948թ. մարտի 10-ին վերջապես կազմվեց Գարեգին Նժդեհի մեղադրական եզրակացությունը Հայաստանի ՊԱ նախարարությունում, որտեղ նրան մեղավոր էին համարում ՌԽՖՍՀ ՔՕ հ. 58-4, 58-11 և 58-6 մասի 1-ին հոդվածներով: Գործը ուղարկվում է ԽՍՀՄ-ի ՊԱՆ-ի Հատուկ Խորհրդակցությունում լսելու համար և առաջարկվում է ազատազրկել 25 տարի ժամկետով:

1948թ. ապրիլի 24-ին (ճակատագրի ինչպիսի հեգնանք), հայ քաջորդու նկատմամբ տեղի է ունենում ԽՍՀՄ ՊԱՆ-ի Հատուկ Խորհրդակցություն: Նիստի հ. 15 արձանագրության որոշման մեջ նշված էր. «Գարեգին Եղիշի Տեր-Հարությունյանին, ԽՍՀՄ-ի դեմ թշնամական գործունեության և լրտեսություն կատարելու համար, բանտարկել 25 տարի ժամկետով, դրա սկիզբը հաշվառելով 1944թ. հոկտեմբերի 12-ից»:

Մայիսին գնացքի հատուկ վագոնով Գարեգին Նժդեհը տեղափոխվեց Վլադիմիրի բանտ:

* * *

Նժդեհը ո՛չ մի կերպ չէր համակերպվում իր անելանելի թվացող վիճակի հետ: Նա կրկին ու կրկին թուղթ ու մատիտ էր պահանջում դիմումներ էր գրում ԽՍՀՄ-ի տարբեր ղեկավարներին: Բանտի

ճաղերից դեռ լույս էր իջնում նեղ բանտախուց: Վերցնելով մատիտը՝ նա սկսեց գրել.

«Քաղաքացի դատախազ,

Անհրաժեշտ եմ համարում իմ ցուցմունքներին ավելացնելու հետևյալը, սակայն ո՛չ թե ինքնապաշտպանության նպատակներով, այլ՝ առաջնորդվելով իսկությունը վեր հանելու պահանջով:

1. Այդ իրողությունը, որ նախկինում ես իմ մասն ունեմ ցարիզմի դեմ պայքարում և տարիներով բանտ եմ նստել դրա համար՝ ինքնըստ-ինքյան հաստատում է այն ճշմարտությունը, որ ես չէի կարող դեմ լինել Ռուսական մեծ հեղափոխությանը:

Թուրք պանթուրանականների դրդմամբ մուսաֆաթականների կազմակերպած հայկական ջարդերը Շուշիում, Գողթանում և Նախիջևանում, Կարմիր բանակի կողմից Ջանգեզուրը, որպես Ադրբեջանի անքակտելի մաս հռչակելը, իսկ հետո Ջավալ փաշայի թուրքական գումարտակների հայտնվելը Ջանգեզուրում և նրանց անմարդկային վերաբերմունքը գյուղացիության նկատմամբ, այդ ամենը այնպիսի քաղաքական մթնոլորտ էին ստեղծել 1920-1921թթ., որի ժամանակ հնարավոր դարձավ հակամարտությունը իմ և խորհրդային իշխանության միջև: Ջանգեզուրը ինքնապաշտպանության դիմեց պանթուրանականների դեմ 1919 թվականից, երբ Կարմիր բանակը դեռ Անդրկովկասում չէր: Ջանգեզուրի ինքնապաշտպանությունը կրում էր հայկական տարածքների պաշտպանության բնույթ և ո՛չ թե հակահեղափոխական ելույթ էր: Ես այդ ինքնապաշտպանությունը վարում էի հանուն հայկական տարածքների և ո՛չ թե այս կամ այն վարչակարգի կամ գաղափարախոսության: Մի կողմից հայկական ջարդերի սարսափը, իսկ մյուս կողմից այն ժամանակներում Յոկտեմբերյան հեղափոխության անորոշությունն ու անկայունությունը, ինչպես նաև թուրքական զորքերի ներկայությունը Լենինականում, թելադրում էին ձեռքից բաց չթողնել ու թուրքերաթար պանթուրանականներին չհանձնել այնպիսի կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածք, ինչպիսին Ջանգեզուրն էր: Հայերը, որ կրել էին այդքան շատ արհավիրքներ ու տանջանքեր, իրավունք ունեին զգույշ լինել: Ջանգեզուրը Հայաստանինն է, այդպիսին էր իմ վարած ինքնապաշտպանության լուզուզը:

Ջանգեզուրը Հայաստանին վերամիավորելով՝ հակամարտությունն ավարտվեց:

2. Արտասահմանում իմ քաղաքական վարքագիծը պայմանավորված էր խորհրդա-թուրքական բարեկամության մասին պայմանագրով: Ես թուրքիայի բոլոր բարեկամներին, քեմալականներին

բոլոր օգնողներին համարել են թշնամիներ: Իմ քաղաքական մտահոգությամբ՝ ես այդ պայմանագիրը համարել են անկեղծ բարեկամություն, որն ուղղված էր մեր տարածքային պահանջների դեմ: Այդ բարեկամությունից թուրքերը մեծ օգուտներ քաղեցին: Յենց դրանով և պետք է բացատրել իմ հակախորհրդային քարոզչության փաստը: Խորհրդային Միության համար մեծ դրական օգուտ չէր լինի, եթե հայկական վտարանդիության որոշ տարրեր բոլշևիկներին մոտենային Թուրքիայի հետ հաշտվելու տրամադրություններով: Սակայն խոշոր միևնուս կլիներ, եթե արտասահմանի հայերը հոգեբանորեն հաշտվեին ժամանակակից Թուրքիայի հետ, որին ձգտում են թուրքերը և նրանց պաշտպան անգլոսաքսոները: Համեստության դեմ մեղանչելով՝ պետք է ասեն, որ սփյուռքահայության, մասնավորապես երիտասարդության մեջ գոյություն ունեցող հակաթուրքական տրամադրություններն իմ կողմից կազմակերպված շարժումների և կազմակերպությունների արդյունքն են...

3. «Դաշնակցության» շարքերից դուրս գալով՝ ես ապացուցեցի այն ճշմարտությունը, որ իմ մեջ հայրենասերը կուսակցությունից բարձր է նստած: Ինքնագոհ հայրենասեր ու տեսական գիտակցություն ունեցող հայը, վերջ ի վերջո, չի կարող չհամոզվել, որ հայ ժողովրդի անվտանգ գոյությունը հնարավոր է լուրջ նրա անքակտելի բարեկամությամբ մեծ և անպարտելի ռուս ժողովրդի հետ: Եվրոպական մեծ տերությունների անմարդկային վերաբերմունքը հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ և նրանց դրսևորած հովանարավորչությունը Թուրքիային, ապա իմ քաղաքական մտածողության բարեշրջումը, իհարկե, պետք է ինձ դրդեին մոտիկանալ Խորհրդային իշխանության հետ: Այդ նպատակով ես 1939թ. Սոֆիայում (պրոֆ. Վահան Թոթոյանցի բնակարանում) դիմեցի Խորհրդային Միության բարեկամ, ռուս գեներալ Արտիշևսկուն և դոկտոր Կիրովին, որոնց խորհրդով դիմեցի Խորհրդա-բուլղարական միության նախագահ, պրոֆ. Բելինսկուն: Ցավոք, սկսված պատերազմի պատճառով, իմ փորձերն անարդյունք մնացին:

Այն, որ ես վտարանդիության մեջ մի կողմ են քաշվել սպիտակ գվարդիականների ու եվրոպական բազմազան հակախորհրդային կազմակերպություններից, որ ես բացասական վերաբերմունք են դրսևորել «ՌՕՎՍ»-ին, որը մտադրվել էր մահափորձ կատարել գեներալիսինուս Ստալինի նկատմամբ, որ ես մնացի Սոֆիայում՝ նպատակ ունենալով իմ ուժերը տրամադրել Կարմիր բանակի հրամանատարությանը - այս բոլոր փաստերը իմ նոր քաղաքական կողմնորոշման ապացույցներն են...

Իմ այն քայլից հետո, երբ ես չմեկնեցի Սոֆիայից, ինձ համար մահվան պես ծանր է դատի տրվելը: Չեն դատում նրան, ով ինձ նման է վարվել: Արդարացի է այն, որ ասպետությանը պատասխանում եմ ասպետությամբ:

Իմ քննիչները հաճախ ինձ ասում էին. «Չենք պատրաստվում ձեզ դատել»...

...Ես հավատում եմ, որ չպետք է զղջամ, որ մնացել եմ Սոֆիայում»:

* * *

Չայաստանի ՊԱՆ-ի հետախուզության պետ գնդապետ Վարդան Մելքունովը նոր էր վերադարձել Մախարաբի աշխատասենյակից: Մարտիրոսովը համաձայնվեց իր առաջարկին, իսկ դա նշանակում էր, որ նա կփորձի համոզել Մոսկվայի ղեկավարներին: «Ո՛չ, ամեն ինչ ճիշտ է»,- ինքն իրեն կրկին համոզում էր Մելքունովը,- Գարեգին Նժդեհին անսահմանորեն նվիրված է հայ ազգին և ամեն ինչ կանի թուրքիայի դեմ»: Վերջ ի վերջո նա իրավ կարող էր Դրոյի և մյուսների հետ անցնել անգլո-ամերիկյան զորքերի տիրապետության տակ գտնվող շրջանները, որտեղ գրկաբաց կընդունեին նրան: Բայց նա չգնաց: Ինչո՞ւ չհավատալ: Ինչո՞ւ կորցնել այդ մարդու հնարավորությունները թուրքիայի դեմ աշխատանքներ կատարելու համար: Առավել ևս, որ խորհրդային երկրի ղեկավարները միայն Արևմուտքի ճնշման տակ ռազմական գործունեությունների չգնացին թուրքիայի դեմ: Դա խորհրդային երկրի շահերից էր բխում, և, դեռևս հույս կա, որ այդ շահերը կնպաստեն հայերի իղձերի կատարմանը՝ թուրքերի կողմից բռնագրավված հայկական հողերի ազատագրմանը:

* * *

Մոսկվայից ստացված ծածկագիրը դրված էր Մելքունովի սեղանին: Ներս մտավ երիտասարդ աշխատակիցը և պատրաստականորեն կանգնեց պետի առաջ:

- Լեյտենանտ Աբովյան,- ուշադիր նրան զննելուց հետո ասաց Մելքունովը,- ձեզ մեծ պատասխանատու հանձնարարություն է տրվելու, որի մասին, նույնիսկ մեր շենքում, տեղյակ եմ սահմանափակ թվով մարդիկ:

Աբովյանը, անձայն, մոտեցավ գրասեղանին մոտ դրված աթոռին ու նստեց:

- Ահա՛, կարդա՛ այս ծածակագիրը,- շարունակեց Մելքունովը և նրան մեկնեց իր առջև դրված թուղթը:

Աբովյանը լուռ կարդաց, ապա պայծառացած դեմքով դիմեց պետին.

- Նժդեհը բերվելու է Հայաստան: Այ քեզ բան: Ուրեմն ե՞ս ևս տեսնելու եմ նրան:

Պետը մեղմորեն ժպտաց, ապա, խիստ հայացք ընդունելով, ասաց.

- Իհարկե, հասկանում եմ զգացմունքներդ: Բայց, ի նկատի ունեցիր: Քեզ, իրոք, լուրջ աշխատանք է սպասվում և դու պետք է զսպես զգացմունքներդ: Նժդեհի հետ կապված բոլոր անձնական հարցերի լուծումը դրվում է քո վրա: Կկարողանա՞ս պատվով կատարել այդ հանձնարարությունը,- կրկին ժպտաց պետը:

- Ամեն ինչ կանեմ,- վստահ պատասխանեց Աբովյանը:

- Դե՛, ուրեմն պատրաստվի՛ր դիմավորելու մեր հյուրին: Ես սխալ չարտահայտվեցի,- տեսնելով Աբովյանի հայացքի փոփոխությունը՝ շարունակեց պետը: - Նա, բնական է, որ դեռ գտնվելու է մեր բանտում, սակայն, նա մեր հյուրն է լինելու, ուստի քո խնդիրն է, որ նա բանտում իրեն համեմատաբար լավ զգա: Ֆինանսավորման հարցը հնարավորինս լուծված է: Կդիմավորես, ապա կկազմակերպես հազուստի խնդիրները և մշտապես կհետևես, որպեսզի սնունդը ևս նորմալ լինի...

* * *

Նժդեհը երկու զինված ուղեկիցների հետ նստած էր վազոնախցում և անընդհատ մտորում էր: «Վերջապես հավատացին, վերջապես դուրս կգամ սպանիչ անգործությունից»: Երբ իրեն Վլադիմիրի բանտում ասացին, թե երևան են տեղափոխում, սիրտն արագ սկսեց տրոփել: Սակայն ո՛չ մեկը չբացատրեց, թե ինչո՞ւ են տեղափոխում: Ասացին՝ տեղում կբացատրեն: Բայց սիրտը չէր խաբում: Համոզված էր, որ անտեղի չէին տեղափոխի, հավանաբար իր համառ ջանքերն անարդյունք չէին անցել: Մթնել էր: Վազոնի ուղեկիցների հետ նա ողջ ճանապարհին գրեթե չէր զրուցել: Նրանցից մեկը դուրս եկավ վազոնախցից և մի փոքր անց վերադառնալով ասաց, որ մի քանի րոպեից տեղ են հասնելու: Գնացքը դադարեցրեց ընթացքը և կանգ առավ: Որոշ ժամանակ անց՝ դուռը թակեցին: Ներս մտավ քաղաքացիական հազուստով մի կարճահասակ երիտասարդ և ցույց տալով վկայականը ուղեկիցներին՝ դիմեց լուռ նստած Նժդեհին.

- Բարև ձեզ, պարոն Նժդեհ, ես անվտանգության աշխատակից Աբովյանն եմ: Պատիվ ունեմ դիմավորելու ձեզ Հայաստանում և ուղեկցելու ուր որ անհրաժեշտ է: Խնդրում եմ դուրս գալ ինձ հետ:

Նժդեհը գլխի շարժումով ողջունեց երիտասարդին, ապա վեր կացավ: Նրանք միասին դուրս եկան վագոնից: Կայարանի մոտ նրանց սպասում էր սև գույնի մարդատար մի մեքենա: Նժդեհն իսկույն նկատեց, որ իրեն վանդակապատ մեքենայով չեն տանում և թեթևացած շունչ քաշեց: Ուրեմն չի սխալվել: Հավանաբար առջևում դեռ նոր անակնկալներ են սպասում:

Աբովյանը ուղեկցեց Նժդեհին մինչև բանտախուցը, որտեղ նայելով նրա հնամաշ, զուներափված հագուստներին՝ ասաց.

- Պարոն Նժդեհ, առավոտյան կբերեմ նոր հագուստներ, կարծում եմ՝ չեք առարկի, եթե բաճկոն լինի, լայնեզր գլխարկ:

Նժդեհը հարցական հայացքով նայեց Աբովյանին

- Գլխարկն ի՞նչ պետք է անեմ բանտում:

Աբովյանը մի պահ շփոթվեց, ապա իրեն հավաքելով՝ ասաց.

- Ինձ կարգադրված է, որ գլխարկ էլ գնեմ ձեզ համար:

- Այո՛,- ժպտաց Նժդեհը,- եթե կարգադրված է, ապա չեմ առարկում: Մի խնդրանք էլ ունեմ՝ եթե հնարավոր է ինձ թերթեր բերեք, հայկական թերթեր:

* * *

Մելքունովը վեր կացավ և գնաց ներս մտած Նժդեհին ընդառաջ:

Նոր գնված հագուստները կարծես մի փոքր լայն էին արդեն տարիքն առած, սակայն զինվորական կեցվածքը չկորցրած սպարապետին: Ձեռքով բարևելուց հետո՝ Մելքունովը ներկայացավ և հրավիրեց նստել.

- Հայաստանի Հանրապետության հետախուզության բաժնի պետ Վարդան Մելքունով: Ես պատկերացնում եմ, թե ինչե՛ր են անցել ձեր մտքով մինչև այստեղ գալը:

- Բնականաբար, տարբեր մտածումներ են ունեցել, պարոն Մելքունով: Սակայն ներքուստ ենթադրել եմ, որ ինձ համար ինչ-որ դրական փոփոխություն է սպասում: Դիմավորելու ձևից և այս հագուստներից իմ այդ ենթադրությունն ավելի ամրապնդվեց:

- Դուք չեք սխալվում,- հաստատեց Մելքունովը: Կարծում եմ՝ հարկ չկա հեռվից սկսելու, ուստի միանգամից կներկայացնեմ մեր առաջարկները՝ հույսով, որ դուք չեք մերժի դրանք:

Ձեզ քաջ հայտնի է, որ Խորհրդային Միությունը հատուկ վերաբերմունք ունի դեպի Թուրքիան և երբևիցէ չի հրաժարվել որոշ տարածքային խնդիրներ լուծելու մտքից, չնայած որ դա բացահայտորեն չի դրսևորվում: Այո՛, պատերազմի ավարտին գրեթե լուծվելու էր հայկական հողերի միացման մեր՝ հայերիս երազանքը: Մենք պատրաստ էինք մտնելու Թուրքիայի տարածքը, սակայն Արևմուտքի տերությունները խանգարեցին:

Մելքունովը որոշակի ընդմիջում արեց, և համոզվելով, որ իր առաջ նստած, խելացի աչքերով տղամարդը հետաքրքրված լսում է, շարունակեց.

- Այո՛, այս անգամ էլ չստացվեց, սակայն հարցը դեռևս օրակարգում է, և դա լուծելու համար անհրաժեշտ է նաև ձեր օգնությունը:

Նժդեհի դեմքի ժպիտը բավական էր պատասխանի համար: Նա գլխով դրական շարժում արեց.

- Ես միայն կարող եմ ողջունել նման նախաձեռնությունը,- վստահ ձայնով ասաց նա: - Ես ո՛չ միայն ողջունում եմ, այլև անչափ ուրախ եմ, որ չեմ սխալվել՝ մնալով Բուլղարիայում: Ես պատրաստ եմ Թուրքիայի նկատմամբ կատարվող բոլոր հարցերում օժանդակել: Եթե որոշակիացնենք ձեզ հետաքրքրող հարցերը, ապա մենք առավել արդյունավետ կքննարկենք դրանք:

- Մեզ առաջին հերթին հետաքրքրում էր ձեր ցեղակրոն կազմակերպության հնարավորություններն այդ երկրում:

- Հասկանալի է,- պատասխանեց Նժդեհը: - Ինձ որոշ ժամանակ տրամադրեք և ես կներկայացնեմ իմ առաջարկները ո՛չ միայն ցեղակրոնների հնարավորություններով, այլև՝ առավել լայն շրջանակներով:

Այնուհետև գրույցը կես խոսքից իրար հասկացող մասնագետների հանդիպման բնույթ ընդունեց: Նժդեհի տրամաբանված նախնական առաջարկները արդեն իսկ լրջորեն քննարկվում էին...

* * *

Աշնանային այդ օրը ընդմիշտ տպավորվեց Արմյանի հոգում: Մելքունովի հետ նրանք զբոսանքի տարան սպարապետին: Մեքենան դուրս եկավ Պետական անվտանգության նախարարության շենքի բակից և ուղղություն վերցրեց դեպի Հաղթանակի զբոսայգի:

Պայծառ, արևոտ օր էր: Նժդեհը ազահորեն նայում էր իր համար հրաշքի նմանվող Երևանի փոփոխություններին: Գավառային, ավելի շուտ գյուղական բնույթի քաղաքը վերածվել էր տուֆակերտ իսկական

քաղաքի: Մեքենան անցավ Աբովյանի պուրակը և սկսեց ծանրորեն բարձրանալ ճանապարհով: Առավոտյան ժամերն էին, և շրջապատում գրեթե մարդ չկար: Նժդեհը դանդաղ իջավ մեքենայից և Մելքունովի ու Աբովյանի ուղեկցությամբ քայլեց դեպի Երևանը նայող պուրակի կողմը: Հանկարծ, նրա տեսադաշտում բացվեց հրաշք քաղաքը, որին, ասես հեռվից սատարում էր երկգագաթանի սուրբ սարը՝ Արարատը:

Ուղեկիցները մի քանի քայլ ետ մնացին: Սպարապետը չէր հավատում իր աչքերին: Նա երկար, շատ երկար նայեց քաղաքին, ապա շուռ եկավ, և նրա ուղեկիցները տեսան սպարապետի արցունակալած աչքերը: Հազար ու մի արգելքներ, դժվարություններ տեսած ու հաղթահարած երկաթյա զինվորականը լաց էր լինում...

- Կարելի՞ է մի բուռ հող վերցնեն այստեղից,- խնդրագին դիմեց սպարապետը:

- Իհարկե՞,- իսկույն պատասխանեց Մելքունովը:

Տարիքն առած գորավարը գրպանից հանեց թաշկինակը, կռացավ և դողդողացող ձեռքերով սկսեց հող լցնել թաշկինակի մեջ: Նրա չդադարող արցունքներն ընկնում էին թաշկինակի մեջ հավաքած հողի վրա: Կապելով իր թաշկինակի թանկագին գանձը՝ Նժդեհը կրկին շրջվեց դեպի Երևանի կողմը...

Մեքենան դանդաղ անցնում էր Նժդեհին ծանոթ և այդքան նոր ու անծանոթ Երևանի փողոցներով:

- Հիշո՞ւմ եք, այս ի՞նչ շենք է,- կարծես միամտորեն հարցրեց Աբովյանը:

- Հիշո՞ւմ եմ, տղա՛ս, հիշո՞ւմ, սա մեր պառլամենտի շենքն է,- պատասխանեց սպարապետը:

Այդ գիշեր Նժդեհը չկարողացավ քնել:

* * *

Նախարարը մտահոգ էր:

- Մելքունով, կգնաս Մոսկվա և տեղում կհամոզես, որ այս հարցերում կարելի է անվերապահորեն վստահել նրան: Այդ Կուզնեցովի մոտ կրկին կասկածներ ու անվստահություն են առաջացել... Կկարողանա՞ս համոզել:

- Կկարողանամ,- վստահորեն պատասխանեց Մելքունովը,- մի՞թե նրանք չեն հասկանում, որ Նժդեհի նման ազգապաշտ անձնավորությունը կյանքն իսկ չի խնայի իր ազգի շահերի համար: Ես վստահ եմ, որ կհամոզեմ: Նժդեհը մեր ժողովրդին դեռ կարող է ծառայել, և մենք պետք է օգնենք նրան:

- Ես նույն կարծիքին եմ: Ուստի շտապ մեկնիր Մոսկվա և տեղում համոզիր Կուզնեցովին: Տե՛ս, ձեռնունայն չգա՛ս:

* * *

Արդեն ցրտել էր: Մոսկվայից վերադարձած Մելքունովը շարունակում էր գործուն աշխատանքները Նժդեհի հետ: Ծրագրերը լայնածավալ էին և իրատեսական: Նա կանչեց Աբովյանին:

- Վերարկու գնեցի՞ր,- եղավ նրա առաջին հարցը:

- Գնեցի: Կարծում եմ գոհ կմնա,- պատասխանեց Աբովյանը:

- Տե՛ս, դու դեռ երիտասարդ ես, կարող է լիովին չըմբռնես, թե ինչ բախտի ես արժանացել՝ շփվելով այդ մեծ հայի հետ: Եղի՛ր առավել ուշադիր և հոգատար: Ցավոք, դեռ հնարավոր չէ փոխել նրա կարգավիճակը, բայց դեռ հույս ունեմ լուծել նաև այդ խնդիրը:

- Ընկեր Մելքունով՝, մի՞թե որևէ վրիպում եք նկատել ինձ մոտ,- նեղացած տեսքով խոսեց Աբովյանը: - Մի՞թե նրա հետ շփվող մարդը կարող է չտեսնել ու չգնահատել նրա մեծությունը:

- Լավ, ես դիտողություն չունեմ: Պարտականություններդ ճշտությամբ կատարում ես: Ուղղակի իմ հոգին է անհանգիստ: Կարծես թե փոխվում է արտաքին քաղաքականության կուրսը: Փոխվում է, և դա կարող է լավ հետևանքներ չունենալ նրա և մեր այս գործի համար: Գնա՛, գնա՛ հանգստացիր...

* * *

Մելքունովը տխուր հայացքով նայում էր կարծես կրկին շատ ծերացած սպարապետին: Նա մեծ դժվարությամբ հայտնել էր, որ ԽՍՀՄ-ը փոխել է իր քաղաքական կուրսը և արտաքին գործերի նախարար Մոլոտովը համայն աշխարհին հայտարարել է, թե ԽՍՀՄ-ը որևէ տարածքային խնդիր չունի իր հարևանի հետ: Դա վերջն էր: Սկսած դժվարին, բայց և հեռանկարային գործունեության վերջը: Սակայն դա չէր միայն, որ կրծում էր Մելքունովի հոգին: Փաստորեն, նա, կամա թե ակամա, դարձել էր մեծ հայի, մեծ զորավարի ու մտավորականի ողբերգության վկան ու մասնակիցը:

- Գուցե՞, այնուամենայնիվ, մնաք Հայաստանում,- կրկին փորձեց համոզել Մելքունովը:

- Հարկ չկա տանջվելու,- հայրաբար խոսեց սպարապետը:

- Հասկանում եմ, դուք ևս ծանր եք ապրում այս անհեթեթ վերջաբանը, բայց ես չեմ կարող ուրախացնել իմ թշնամիներին: Ես արդեն ծեր եմ,

այո՛, ծեր եմ և երկար չեմ դիմանա բանտային պայմաններին, իսկ մեռնել Հայաստանի բանտում՝ նշանակում է ուրախացնել թուրքերին: Ո՛չ, Նժդեհը Հայաստանի բանտում չի մեռնի: Խնդրանքս մեկն է, մի անգամ էլ պտտվեմ Երևանի փողոցներով...

* * *

Վլադիմիրի չորս հարկանի բանտի խցերից մեկում կալանավոր Կուզմենկոն, նստած, լուռ արտասվում էր: Նրա ծնկներին ընկած թղթին գրված էր իր հեղինակած ոտանավորը.

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Տեսա մի բուռ հող՝ թաքցրած
Ալեհեր բանտարկյալի մոտ.
Իր բանտախուցն էր նա բերել
Հայրենի երկրից մի բեկոր:

Պահում էր որպես բալասան
Եվ հաճախ խոնարհվում նրան.
- Անթեյը Ձեզ կնախանձեր,-
Ասացի մի անգամ նրան:

- Շատ եմ մաքառել, սիրելի՛ս,
Պայքարել քառասուն տարի,
Եվ ահա... այսքանն է,- ասաց,-
Իմ բաժին հողը հայրենի:

Տխուր ու դաժան պատերով
Բանտային մեր խուցը մի օր
Խուզարկու զինվորներ մտան
Եվ հողն այդ խլեցին մի բուռ:

Տեսա արցունքները նրա՝
Մանկան պես արտասվող ծերունու.
Ի՛նչ ասել է հող հայրենի,
Որին կապվել ես ողջ կյանքով:

1951, սեպտեմբեր

1955թ. դեկտեմբերի 21-ի երեկոն էր: Կուզմենկոն մոտեցավ լուռ պառկած ծերունուն և ուղղեց նրա վրա զցած շորը: Հանկարծ լսեց ինչ-որ մեծ թռչունի թևերի թափահարման ձայն, և, զարմացած, մոտեցավ բանտաճաղերով փակված պատուհանին: Այլ քեզ հրաշք: Օդում սավառնում էր սպիտակ մի արծիվ: Պտտվում էր բանտի շուրջը, ապա ցած սլացավ, և, թևերը հավաքելով՝ նստեց պատուհանի մոտ: Ասես, մարդկային աչքերով նայում էր ներս:

Կուզմենկոն ականա ետ քաշվեց: Արծիվը սուր հայացքն ուղղեց լուռ պառկած ծերունուն, զիլ կռնչաց, ապա թևերը բացելով վեր խոյացավ: Կուզմենկոն նորից մոտեցավ պատուհանին ու տեսավ, թե ինչպես արծիվն անհետացավ երկնքում:

Ուշքի գալով՝ նա արագ մոտեցավ ծերունուն: Սպարապետը վախճանվել էր:

Անմահությունն ու հավերժությունը սպիտակ արծվի թևերով իջան Եղիշե քահանա Հարությունյանի օջախի երդիկին, նրա զավակի ծննդյան սուրբ պահին:

Հավերժության ճամփորդ Գարեգին Նժդեհը, Սպիտակ Արծվի անկասելի սլացքով մխրճվեց Անվերջ Ապագայի մեջ՝ դառնալով իր ազգի մշտական ուղեկիցն ու անմար փարոսը:

«Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, եւ մեռնել միայն այն բանի համար, որի համար արժեք ապրել»:

Գ. ՆՃԴԵՅ